



<https://www.printo.it/pediatric-rheumatology/AM/intro>

Դեղորայքային բուժում

Տարբերակ 2016

9. Հիդրոսիքլորոքվին

9.1 Նկարագրություն

Հիդրոսիքլորոքվինը սկզբում օգտագործվել է մալարիայի բուժման համար: Հետագայում պարզվեց, որ այն կարող է ազդել որոշ պրոցեսների վրա, որոնք կապ ունեն բորբոքման հետ:

9.2 Դոզան / նշանակման եղանակները

Այս դեղամիջոցը տրվում է հաբերի ձևով, օրը մեկ անգամ, մինչև 7 մգ/կգ/օրը, ուստի ու ընթացքում կամ կաթով:

9.3 Կողմնային ազդեցությունները

Սովորաբար Հիդրոսիքլորոքվինը հիվանդների կողմից լավ է տարվում: Հնարավոր է ստամոքսաղիքային խանգարումների, մասնավորապես՝ սրտխառնոցի առաջացում, որը ծանր չի լինում: Հիդրոսիքլորոքվինը կուտակվում է աչքի մի հատվածում, որը կոչվում է ցանցաթաղանթ, ուր նա պահպանվում է բուժումը դադարեցնելուց հետո ևս երկար ժամանակ:

Այս բարդությունը հազվադեպ է առաջանում, սակայն կարող է շատ ծանր լինել՝ հանգեցնելով մինչև անգամ կուրության, նույնիսկ դեղի ընդունումը դադարեցնելուց հետո: Այնուամենայնիվ աչքերի ախտահարումը գործնականում կիրառվող ցածր դոզաների պարագայում խիստ հազվադեպ է հանդիպում:

Այս բարդությունը վաղ հայտնաբերելու դեպքում դեղամիջոցի ընդունումը դադարեցնելը կանխում է տեսողության վատացումը: Այս պատճառով ցուցված է աչքերի պարբերաբար կատարվող

հետազոտություններ, թեև մինչև օրս էլ վիճաբանությունները շարունակվում են, արդյո՞ք արդարացված է նման քննությունների անհրաժեշտությունը ռևմատիկ հիվանդությունների բուժման ժամանակ տրվող ցածր դոզաների պարագայում:

9.4 Ցուցումները հիմնական մակական ռևմատիկ հիվանդությունների ժամանակ

Յուվենիլ Դերմատոմիոզիտ

Յուվենիլ Համակարգային Կարմիր Գայլախտ

Նորանոր դեղեր են ստեղծվում Մանկական Ռևմատոլոգիական Միջազգային Փորձարկումների Կազմակերպության (PRINTO) և Մանկական Ռևմատոլոգիական Համագործակցական Հետազոտական Խմբի (PRCSG at www.prcsg.org) դեղագործական ընկերություններում և կլինիկական հետազոտողների կողմից: PRINTO և PRCSG ներգրավված են պրոտոկոլների, հիվանդության պատմությունների, վերանայման, տվյալների հավաքագրման, տվյալների վերլուծման և բժշկական գրականությունում հաշվետվության մեջ:

Մինչև ձեր բժիշկը իրավունք կունենա նշանակել նոր դեղամիջոց, պետք է մանրամասն ստուգվի դրա անվտանգությունը և հիվանդին բուժելու կարողությունը կլինիկական փորձերով: Սովորաբար դեղի օգտագործումը երեխաների մոտ հաջորդ քայլն է մեծահասակների մոտ դրանց օգտագործումից հետո, հետևաբար որոշ դեղեր կարող են կիրառվել միայն մեծահասակների մոտ: Թույլատրելի դեղորայքների աճի հետ զուգահեռ նվազում են առանց գրանցման դեղերի օգտագործումը: Դուք կարող եք օգնել նոր դեղերի զարգացմանը՝ մասնակցելով կլինիկական փորձերին:

Ավելի շատ տեղեկատվություն կարող եք գտնել հեռևյալ կայքերում.

PRINTO www.printo.it; <https://www.printo.it/pediatric-rheumatology/>

PRCSG www.prcsg.org

Ընթացքում գտնվող կլինիկական փորձեր

www.clinicaltrialsregister.eu/

www.clinicaltrials.gov

Եվրոպայում երեխաների համար նոր դեղորայքի զարգացման

համաձայնեցված պլաններ

www.ema.europa.eu/ema/index.jsp?curl=pages/medicines/landing/pip_search.jsp&mid=WC0b01ac058001d129